Արձանագրություն N9

2021թ. փետրվարի 22-ին կայացավ Երևանի <<Հայրապետ Հայրապետյանի անվան հ.78 խորհրդի հերթական նիստը /հեռավար/: Նիստին մասնակցում էին 6 անդամ: Բացակայում էին

1.Կարինե Զիրաքյան-Մանուկյան

2.Սոֆյա Մանուկյան

Խորհրդակցական ձայնի իրավունքով նիստին մասնակցում էին դպրոցի գործադիր տնօրեն՝ Ազնիվ Միրզոյանը և գլխավոր հաշվապահ՝ Զենիկ Ղազարյանը:

Օրակարգում

1/Քննարկել և հավանություն տալ հաստատության 2-րդ կիսամյակի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին /զեկուցող՝ Ա.Միրզոյան/:

2/Տնօրենի ներկայացմամբ քննարկել և հավանություն տալ ու ներկայացնել պետական լիազորված մարմնի հաստատմանը, ուսումնական հաստատության 2021-ի ամենամյա ծախսերի նախահաշիվը /զեկ.՝ Ա.Միրզոյան/:

3/2020թ.-ի տարեկան ֆինանսական հաշվետվության ներկայացում /զեկ.՝ Զ.Ղազարյան/

4/Տնօրենի ներկայացմամբ հավանություն տալ և ներկայացնել պետական լիազորված մարմնի հաստատմանը մանկավարժական խորհրդի կողմից չընտրված կոլեգիալ կառավարման խորհրդի անդամին՝ / զեկ.՝ Ա.Միրզոյան/:

1/Լսեցին

2020-2021 ուստարավ 2-րդ կիսամյակի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին: Հարցի մասին խոսեց գործադիր տնօրեն՝ Ա.Միրզոյանը: Հաղորդողը ներկայացրեց, որ 2-րդ կիսամյակում աշակերտների թիվը 960 է: Ելնելով կատարված դասաբաշխումից և հաստիքացուցակից, կազմվել է տարիֆիկացիոն ցուցակը, հաշվի առնելով ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը, շենք-շինության մակերեսն ու դասասենյակների քանակը: Նշվեց, որ 2-րդ կիսամյակում դպրոցը շարունակելու է աշխատել երկհերթ՝ կապված համավարակի հետ:

Ելնելով կատարված հաղորդումից, կառավարման խորհուրդը

Որոշեց.

Հավանություն տալ և վերադասի հաստատմանը ներկայացնել 2020-21 ուստարվա 2-րդ կիսամյակի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները:

Լսեցին

Ուսումնական հաստատության 2021թ-ի ամենամյա ծախսերի նախահաշիվը: Երևանի <<Հայրապետ Հայրապետյանի անվան հ.78 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի 2021 ամենամյա ծախսերի նախահաշիվը: Նախահաշվի քննարկման մասին հաղորդեց գործադիր տնօրեն Ա.Միրզոյանը: Պլանավորվել և կազմվել է 2021թ-ի բյուջեի նախնական տարբերակը՝ հաշվի առնելով աշակերտների թվի աճը, ակնկալվող ֆինանսական ներհոսքը այլ աղբյուրներից: Հաղորդեց պարտադիր կատարման ենթակա ծախսերը՝ աշխատավարձի վճարում, կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներ, այլ հոդվածներով նախատեսված ծախսեր: Կոլեգիալ կառավարման խորհուրդը ծանոթացավ 2021թ. բյուջեի նախնական տարբերակին, քննարկեց և

Որոշեց

ա/հավանություն տալ և հաստատել <<Երևանի Հ.Հայրապետյանի անվան հ.78 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի 2021թ.-ի բյուջեի նախնական տարբերակը:

բ/Դպրոցի 2021թ. բյուջեի նախնական տարբերակը ներկայացնել վերադաս մարմնի հաստատմանը

գ/Իրականացնել վերահսկողություն բյուջեի կատարման գործընթացների նկատմամբ:

Նիստը վարեց Նառա Բաղալյանը:

Լսեցին

Կառավարման խորհրդի նոր անդամի մասին հաղորդումը/զեկուցող՝ Ա.Միրզոյան/: Հաղորդողը ներկայացրեց, որ Մարինե Ժորայի Համբարձումյանը իր դիմումի համաձայն դադարացրել է խորհրդի նախագահի և անդամի լիազորութիունները /ժամկետը լրանալու պատճառով/: Մանկավարժական խորհրդի անդամների ընտրությամբ խորհրդի անդամ է ընտրվել Կարինե Ազատի Դավթյանը: Հիմք մանկավարժական խորհրդի N5 արտահերթ նիստը /18.02.2021/: Կառավարման խորհուրդը լսելով հաղորդումը

Որոշեց

Դիմել Երևանի քաղաքապետին՝ Երևանի <<Հ.Հայրապետյանի անվան հ.78 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կազմում փոփոխություն կատարելու համար:

Նիստի նախագահ՝ Ն.Բաղալյան

Քարտուղար՝ Գ.Պետրոսյան